Հաստատված է
Հայաստանի Հանրապետություն
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
կառավարման խորհրդի
2022թ. նոյեմբերի 30-ի N 10-Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ք. Երևան, 0009, Կորյուն փողոց 15, կայք՝ http://www.ecoinspect.am/
☎ հեռ. (015) 48-48-48, Էլ. փոստ՝ info@ecoinspect.gov.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ..... **2**
Ներածություն **3**
ԲԸՏՄ-ի նպատակ..... **3**
ԲԸՏՄ-ի խնդիրներ..... **3**
Կառուցվածք..... **4**
Հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներ..... **4**
Տարածքային բաժիններ..... **4-5**
Քարտեզ 1
ԲԸՏՄ-ի ՏԲ տեղաբաշխվածությունը ՀՀ տարածքում..... **6**
Բյուջե **7**
Կարիքներ **7**
Համագործակցություն **7**
Տեղեկատվության հավաքագրման աղբյուրները **7-8**
Քարտեզ 2 ..... **9**
Քարտեզ 3 ..... **10**
ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ.....
1. ԲԸՏՄ-ի վերահսկողության ոլորտների ընդհանուր վիճակը **11**
1.1 Բուսական և կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության վերահսկողության ուղղություններ.....
1.1.1 Առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը
1.1.2 Ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ **11-16**
1.2 Ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության ուղղություն.....
1.2.1 Առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը
1.2.2 Ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ **16-17**
1.3 Մթնոլորտային օդի, ջրերի, հողերի, վտանգավոր նյութերի և թափոնների գործածության, օգտագործման և պահպանության ուղղություններ .....
1.3.1 Առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը
1.3.2 Ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ **18-22**
2. 2023 թվականի տարեկան ծրագրով պլանավորված ստուգումներ **22-24**
3. ԲԸՏՄ-ի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված 2023 թվականի միջոցառումների ժամանակցույց..... **25-29**
4. ԲԸՏՄ-ի կանխարգելիչ և իրազեկման 2023 թվականի միջոցառումներ **30-33**

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

Խորհուրդ- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդ

Գրասենյակ - Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

ԲԸՏՄ - ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

ՋՄՀԹՎՆՎՎ - Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն.

ԸՎՎ - Ընդերքի վերահսկողության վարչություն

ԿՎՎ - Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն

ՌԳՎՎ - Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն

ԻԱՓՎ - Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն

ԻՀՀՏԱԲ - Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին

ԼՀԲ - Լաբորատոր հետազոտությունների բաժին

ՏԲ - Տարածքային բաժին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 10-րդ մասով և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը վերակազմավորվել է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի: ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 733-Լ որոշմամբ հաստատվել է ԲԸՏՄ-ի կանոնադրությունը:

Համաձայն «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի և Խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշման՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ին նախորդող նիստին Խորհուրդը քննարկում և հաստատում է ԲԸՏՄ-ի գործունեության տարեկան ծրագիրը, որը հրապարակվում է պաշտոնական կայքէջում:

Տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումներից, տարեկան ծրագրով պլանավորված ստուգումներից բացի, ԲԸՏՄ-ն իրականացնում է մի շարք չպլանավորված աշխատանքներ, մասնավորապես՝ ՀՀ վարչապետից ստացված հանձնարարականի, քաղաքացիներից, իրավաբանական անձանցից, անհատ ձեռնարկատերերից ստացված դիմումների, իսկ պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված՝ գրավոր տեղեկատվությունների հիման վրա ստուգումներ, ինչպես նաև ուսումնասիրություններ, դիտարկումներ, վարչական վարույթներ, շրջայցեր և այլ վերահսկողական գործողություններ:

ԲԸՏՄ-ի նպատակն է՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը:

ԲԸՏՄ-ի խնդիրներն են՝

1) բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը.

2) շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշմամբ ԲԸՏՄ-ի համար սահմանվել է թվով 194 հաստիք, որից 46-ը՝ թափուր:

Կառուցվածք: ԲԸՏՄ-ը կազմված է հիմնական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներից: Տարածքային ստորաբաժանումները տեղաբաշխված են Երևանում և ՀՀ 10 մարզերում: ԲԸՏՄ-ի ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է մարմնի ղեկավարը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:

ԲԸՏՄ-ի հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն.

2) Ընդերքի վերահսկողության վարչություն.

3) Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն.

4) Որակի ապահովման վարչություն.

5) Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն.

6) Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն.

7) Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին.

8) Լաբորատոր հետազոտությունների բաժին:

ԲԸՏՄ-ի տարածքային ստորաբաժանումներն են՝

1) Երևանի տարածքային բաժին.

2) Արագածոտնի տարածքային բաժին.

3) Արարատի տարածքային բաժին.

4) Արմավիրի տարածքային բաժին.

5) Գեղարքունիքի տարածքային բաժին.

6) Լոռու տարածքային բաժին.

7) Կոտայքի տարածքային բաժին.

8) Շիրակի տարածքային բաժին.

9) Սյունիքի տարածքային բաժին.

10) Վայոց ձորի տարածքային բաժին.

11) Տավուշի տարածքային բաժին:

ԲԸՏՄ տարածքային ստորաբաժանումների տեղակայումը՝ ըստ վարչական տարածքների, հասցեները և հեռախոսահամարները ներկայացված են Քարտեզ 1-ում:

Քարտեզ 1

Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների տեղակայումը՝ ըստ վարչական տարածքների



Բյուջե: ԲԸՏՄ-ն լիազորությունների իրականացման նպատակով 2023 թվականի կտրվածքով պլանավորվել է իրականացնել 1,103,124,300 ՀՀ դրամի բյուջետային հատկացում, որից միայն աշխատանքի վարձատրություն՝ 846,387,100 ՀՀ դրամ:

Կարիքներ: ԲԸՏՄ-ն լիազորությունների շրջանակներում վերահսկողությունը պատշաճ, ժամանակին և թափանցիկ իրականացնելու նպատակով ապահովելու է կադրերի մասնագիտական ներուժի և նյութատեխնիկական (համակարգչային տեխնիկա և լաբորատոր սարքավորումներ) հագեցվածությունը: Իրականացվելու է նաև թափուր հաստիքների համալրում, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործում:

Համագործակցություն:

2023 թվականին Երևանի պետական, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական, Հայաստանի ազգային ագրարային համալսարանների հետ ստորագրված հուշագրերի շրջանակներում շարունակվելու են համագործակցությունը:

2023 թվականին շարունակվելու են նաև Կովկասյան Բնության Հիմնադրամի (CNF) և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Հայաստան) հետ ակտիվ համագործակցությունը:

ԲԸՏՄ-ի կարողությունների զարգացման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համագործակցային հարաբերություններ հաստատելու և լավագույն փորձի փոխանակման շրջանակներում իրականացվելու են շարունակական աշխատանքներ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ԲԸՏՄ-ն իր նպատակն ու խնդիրներն իրականացնելու համար վարում է տվյալների բազա, որը ներառում է տեղեկատվություն իր վերահսկման ոլորտներում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշներով գնահատված միավորները:

ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1125-Ն որոշմամբ ԲԸՏՄ-ի կողմից իրականացվել է ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների դասակարգում՝

ըստ ռիսկայնության աստիճանների (բարձր ռիսկայնության՝ 685, միջին ռիսկայնության՝ 1720 և ցածր ռիսկայնության՝ 1030): Ըստ ռիսկայնության աստիճանների դասակարգված տնտեսավարող սուբյեկտների քանակը և ըստ վարչական տարածքների բաշխվածությունը ներկայացված է Քարտեզ 2-ում:

ՀՀ-ում առավել ռիսկային ոլորտները և տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները բացահայտելու, ինչպես նաև տարեկան գործունեության ծրագրի (այսուհետև՝ Ծրագիր) կազմման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ԲԸՏՄ-ը տեղեկատվություն է հավաքագրել պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից, քաղաքացիներից և այլ աղբյուրներից: Մասնավորապես՝

- ✓ Պետական եկամուտների կոմիտե և պաշտոնական կայքէջ,
- ✓ Շրջակա միջավայրի նախարարություն և պաշտոնական կայքէջ,
- ✓ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և պաշտոնական կայքէջ,
- ✓ Տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացրած հաշվետվությունների կողմից ներկայացված տարեկան վարչական-վիճակագրական հաշվետվություններ,
- ✓ ԲԸՏՄ-ին և «Թեժ գիծ» հեռախոսահամարին ստացված դիմում-բողոքների ու ահազանգերի վիճակագրություն:

ԲԸՏՄ-ի կողմից վերահսկման ենթակա տնտեսավարող սուբյեկտների քանակը՝ ըստ վարչական տարածքների և գերակշռող մաս կազմող տնտեսական գործունեության տեսակների ներկայացված է ստորև (Քարտեզ 3):

Քարտեզ 2

Տեսչական մարմնի կողմից վերահսկման ենթակա թվով 3435 տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը՝ ըստ վարչական տարածքների



Քարտեզ 3

Տեսչական մարմնի կողմից վերահսկման ենթակա տնտեսավարող սուբյեկտների քանակը՝ ըստ գերակշռող մաս կազմող տնտեսական գործունեության տեսակների

1. ԲԸՏՄ-Ի ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ

Գործունեության տարեկան ծրագրի կազմման համար հիմք են հանդիսացել ԲԸՏՄ-ի կողմից իրականացված վերահսկողության արդյունքների վերլուծությունները՝ պայմանավորված առավել ռիսկային ուղղությունների բացահայտմամբ՝ այն ուղղությունների, որոնցում ավելի հաճախ են կատարվել իրավախախտումներ: Համաձայն այդ վերլուծությունների առավել ռիսկային են համարվում տնտեսական գործունեության հետևյալ ոլորտները՝

- ✓ մետաղական հանքավայրերի շահագործում
- ✓ ոչ մետաղական հանքավայրերի և հանքային ջրերի շահագործում
- ✓ անտառային տնտեսություններ և հատուկ պահպանվող տարածքներ
- ✓ էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում
- ✓ թափոնների տեղադրում և ոչնչացում
- ✓ շինարարություն
- ✓ ոռոգում և ջրամատակարարում
- ✓ ձկնաբուծություն
- ✓ արտադրություն

1.1 ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1.1 Առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Անտառային էկոհամակարգերի վրա մարդածին գործոնների՝ անտառների գերշահագործման, անկանոն հատումների, արածեցման, խոտհնձի, հողազավթումների հետևանքով կրճատվում են անտառային տարածքները, տեղի են ունենում տեսակային կազմի փոփոխություններ, ծառուտները կորցնում են բնական վերականգնման ունակությունը և իջնում է դրանց արտադրողականությունը, անբավարար է անտառկազմող արժեքավոր տեսակների՝ կաղնու և հաճարենու բնական սերմնային վերականգնումը, խիստ կրճատվել են կովկասյան սոճու,

հատապտղային կենու, արջատխլենու և այլ հազվագյուտ ծառատեսակների գերակշռությամբ ծառուտները, որոնք աստիճանաբար վերանում են:

Սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների և փայտանյութի բարձր պահանջարկի հետևանքով անտառհատումները դեռևս գերազանցում են անտառի բնական վերականգնման ծավալները: Դրան նպաստում են էներգակիրների գների բարձրացումը, բնակչության սոցիալապես անապահով խավերի ցածր վճարունակությունը, որի հետևանքով փայտանյութը շարունակում է մնալ բնակչության վառելիքի հիմնական աղբյուրը:

Վերջին տարիներին անտառահատումներից առաջացած տարածքներում նկատվում են հողատարման և ձորակների առաջացման, աղբյուրների չորացման երևույթներ, որոնք վնաս են հասցնում համայնքներին և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներին:

ԲԸՏՄ-ի կողմից սույն ոլորտում իրականացված հետևողական վերահսկողության արդյունքներով կայուն բարձր ռիսկային և նախորդ տարիների կտրվածքով երկարաժամկետ բնույթ է կրում համատարած ապօրինի ծառահատման և ձեռքբերված փայտանյութի տեղափոխմանն առնչվող վերոգրյալ հիմնախնդիրները: Դրա մասին են վկայում ԲԸՏՄ-ի կողմից հավաքագրված վիճակագրական տվյալները, համաձայն որոնց ապօրինի ծառահատումների քանակի նվազման էական միտում չի գրանցվում (Աղյուսակ 1): Ապօրինի ծառահատումների աշխարհագրության 2022 թվականի վերլուծությամբ հատվող ծառերի քանակի տեսանկյունից առավել խնդրահարույց են ՀՀ Կոտայքի, Լոռու և Տավուշի մարզերի գրեթե բոլոր անտառածածկ տարածքներում արձանագրված իրավախախտումները:

Աղյուսակ 1

Վիճակագրություն ապօրինի ծառահատումների և ձեռքբերված փայտանյութի տեղափոխման վերաբերյալ					
ժամանակահատվածը	*հատված ծառերի քանակը /հատ/*	*ձեռքբերված փայտանյութի ծավալը /խմ/*	*տուգանված անձանց թվաքանակը*	*կիրառված վարչական տուգանքի չափը (ՀՀ դրամ)*	*բնությանը պատճառված վնասի գումարի չափը (ՀՀ դրամ)*
2017 թվական	30,720	692	415	32,361,000	3,394,446,400
2018 թվական	12,821	892	504	44,340,000	1,071,368,140
2019 թվական	16,818	3,186	427	41,330,000	1,451,276,420
2020 թվական	12,978	1,647	324	33,836,000	814,714,440
2021 թվական	19,475	2,567	272	28,780,000	1,004,640,274
2022 թվականի 9 ամիս	13,442	858	135	13,990,000	503,674,364

Վերահսկողական գործողությունների շրջանակներում արձանագրվել է նաև փայտածուխի արտադրամասերի կողմից տնտեսական գործունեության արդյունքում շրջակա միջավայրին պատճառված վնասի դեպքեր, այն է՝ տնտեսավարողները գործունեությունն իրականացնում են անտառային և համայնքային հարակից տարածքներում, չեն ապահովում հրդեհային անվտանգության պահանջները, մթնոլորտ են արտանետում թունավոր գազեր, չեն ապահովում արտադրական թափոնների ճիշտ կառավարում և տեղադրում՝ աղտոտելով հարակից տարացքների հողերը:

Կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության առումով ևս հիմնախնդիրների առաջացման հիմնական պատճառ են հանդիսանում մարդածին գործոնները՝ որսագողությունը, գերորսը, անապատացումը, ջրային բալանսի խախտումը, բնակլիմայական պայմանների խախտումը, էկոլոգիական իրազեկվածության պակասը, շրջակա միջավայրի աղտոտվածության ավելացումը, ջրաճահճային տարածքների չորացումը, բնակավայրերի ընդլայնումը և այլն:

Վերջին տարիներին էլեկտրաէներգիայի արտադրությամբ զբաղվող հիդրոէլեկտրակայաններում գործունեությունն իրականացվում է տրված նախագծով պահանջների խախտմամբ, այն է՝ ձկնուղիների սխալ կառուցում, էկոթողքերի չապահովում, տրված ջրառի թույլտվությունների պայմանների անհամապատասխանություն, որոնք կարող են պատճառ հանդիսանալ գետի ինքնավերականգնման, ռեկրեացիոն գոտիների խաթարման, միկրոկլիմայի և էկոհամակարգի հավասարակշտության խախտման, ձկների միգրացիոն ուղիների խաթարման և վերատադրության դադարման:

Հասարակության շրջանում տարածված է նաև զվարճանքի և հանգստի վայրերում վայրի կենդանիների անազատ պայմաններում պահումը, երբ չեն պահպանվում տվյալ կենդանատեսակին բնորոշ կերի չափաբաժնի և պահման ռեժիմի, վերարտադրման պահանջների ապահովումը:

Արձանագրվում են արդյունագործական նպատակով ձկնորսության համար տրված թույլտվություններում նշված պահանջների և պայմանների խախտումներ, այն է՝ ձկնորսության ցանցերի չափերի անհանապատասխանություն, որի հետևանքով խոցելի է դառնում նաև ոչ սեռահասուն մանրաձուկը:

Վերոգրյալ հիմնախնդիրների առաջացման նախապայման են համարվում սոցիալ-տնտեսական առկա իրավիճակը, էկոկրթության և իրազեկվածության ցածր մակարդակը, ոլորտը իրավական կարգավորումների հակասություններն ու բացերը:

1.1.2 Ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Սույն ուղղություններում արձանագրվող իրավախախտումների քանակի և դրանց հետևանքով առաջացող ռիսկերի նվազեցման նպատակով 2023 թվականի կտրվածքով ԲԸՏՄ-ի կողմից իրականացվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերահսկողական միջոցառումներ՝ տարեկան պլանավորված ստուգումներ, ինչպես նաև իրավապահ և այլ պետական մարմինների հետ համատեղ շարունակական կանխարգելիչ միջոցառումներ: Նշված միջոցառումների շրջանակներում ստուգվելու է

տեղափոխվող փայտանյութի ձեռքբերման օրինականությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման թույլտվությունների առկայությունը և արձանագրված դեպքերի առնչությամբ ԲԸՏՄ-ի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառվելու վարչարարություն: Հավանական իրավախախտումների բացառման և կանխարգելման նպատակով իրականացվելու են լայնածավալ իրազեկման աշխատանքներ, հանդիպումներ և բացատրական աշխատանքներ:

ՀՀ օրենսդրական հակասությունների կարգավորման նպատակով 2022 թվականին ներկայացվել են առաջարկություններ, մասնավորապես՝

- ✓ Գրասենյակ է ներկայացվել առաջարկություններ «Բնապահապանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ,
- ✓ ՀՀ շրջակա միջավայրի նախարություն է ներկայացվել առաջարկություններ հատատեղերի շահագործման, թափուկի դուրս բերման և ցանկացած տեսակի փայտանյութի տրամադրման գործընթացները կարգավորող օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ,
- ✓ Գրասենյակ և ՀՀ շրջակա միջավայրի նախարություն է ներկայացվել առաջարկություններ «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքում և «Որսի կանոնները հաստատելու մասին» ՀՀ բնապահպանության նախարարի հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

Վերոհիշյալ օրենսդրական կարգավորումներն ապահովվելու են 2023 թվականի ընթացքում:

ԲԸՏՄ-ի կողմից իրականացվելու են ուժեղացված համատեղ վերահսկողական միջոցառումներ, մասնավորապես՝

- ✓ 2022 թվականի դեկտեմբերից մինչև 2023 թվականի հունվար ամիսներին սիգի ձվադրման ժամկետներում վերարտադրությունն ապահովելու նպատակով,

- ✓ 2022 թվականի օգոստոս ամսից սկսվել են և շարունակվելու են 2023 թվականի ընթացքում ապօրինի ծառահատումների և ձեռք բերված փայտանյութի տեղափոխման դեպքերը կանխարգելելու նպատակով:

1.2 ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

1.2.1 Առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Ընդերքօգտագործման և պահպանության ուղղությունում իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում բացահայտվել են առավել հաճախ կատարվող հետևյալ խնդիրները՝

- ✓ Ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ունեցող ընկերությունները չեն վարում երկրաբանական և մարկշեյդերական փաստագրություններ,
- ✓ ընդերքօգտագործման հետ կապված գործունեություններն իրականացվում են առանց հողատարածքի օգտագործման պայմանագրի և/կամ առանց հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելու, որոնց հետևանքով ընդերքօգտագործման աշխատանքները չեն իրականացվում օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պայմաններին համապատասխան,
- ✓ ընկերությունները չունեն օգտակար հանածոյի պաշարների շարժի ամենօրյա գրանցամատյան:

Համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու որոշման հիման վրա համայնքը պայմանագիր է կնքում կազմակերպությունների հետ, որով թույլատրում է սելավատարերի մաքրման, արոտավայրերում մակերեսային քարակույտերի մաքրման և այլ աշխատանքների իրականացման համար օգտագործել որոշակի ծավալով ավազակոպճային խառնուրդ կամ այլ տեսակի օգտակար հանածո: Սակայն արձանագրվել են դեպքեր, երբ չեն պահպանվում ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները, այն է՝ «իրավաբանական անձինք և քաղաքացիները, առանց ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման, իրենց սեփական հողամասերի

սահմաններում շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, տնտեսական և կենցաղային սեփական կարիքների բավարարման նպատակով կարող են կատարել պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում՝ մինչև 2 մետր խորությամբ, ինչպես նաև ստորերկրյա կառույցների շինարարություն՝ մինչև 5 մետր խորությամբ՝ կառավարության սահմանած կարգով, տեղյակ պահելով լիազոր մարմնին:

Արաքս գետի ամբողջ երկայնքով գործում են 17 ընդերքօգտագործողներ, որոնք աշխատում են ամենօրյա ռեժիմով:

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից Արաքս գետի ավազանում շուրջ 40 կմ երկայնքով ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերի համայնքների հատվածում՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող ընկերություններին տրված թույտվությանների հիման վրա իրականացվել են ստուգումներ, որոնց արդյունքներով հայտնաբերվել է ապօրինի ընդերքօգտագործման դեպքեր և իրավախախտումների նյութերը ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն՝ օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը ապահովելու համար:

Նախատեսվում է շահագրգիռ գերատեսչությունների հետ քննարկել վերհանված խնդիրները և առաջարկել լուծումներ, այդ թվում օրենսդրական փոփոխությունների տեսքով:

1.2.2 Ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Սույն ուղղությունում արձանագրվող իրավախախտումների քանակի և դրանց հետևանքով առաջացող ռիսկերի նվազեցման նպատակով 2023 թվականի կտրվածքով ԲԸՏՄ-ի կողմից իրականացվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերահսկողական միջոցառումներ՝ տարեկան պլանավորված ստուգումներ, ինչպես նաև իրավապահ և այլ պետական մարմինների հետ համատեղ շարունակական կանխարգելիչ միջոցառումներ:

Վերահսկողության ընթացքում պարբերաբար իրականացվում է ընդերքօգտագործման ոլորտը կարգավորող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի իրազեկման աշխատանքներ՝ հետագայում արդյունահանման աշխատանքները ՀՀ օրենսդրությանը համապատասխան իրականացնելու նպատակով:

Ընդերքօգտագործման ոլորտում լիարժեք վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել կադրային կարողությունների զարգացում, թափուր հաստիքների համալրում, ինչպես նաև կազմակերպել շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ՝ կիրառելով առաջատար միջազգային փորձի փոխանակման և բարձր տեխնոլոգիաների ներդրման սկզբունքը:

1.3 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ, ՋՐԵՐԻ, ՀՈՂԵՐԻ, ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.3.1 Առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

2022 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում գրեթե բոլոր վերոգրյալ ուղղություններում արձանագրվել են խախտումներ, մասնավորապես՝

Առանց մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների թույլտվությունների, ինչպես նաև տրված թույլտվություններով սահմանված չափաքանակների արտանետումների գերազանցմամբ իրավախախտումներ: Հանքարդյունաբերության բնագավառում հանքանյութի արդյունահանման, տեղափոխման և վերամշակման արդյունքում արձանագրվել են անօրգանական փոշու քանակական ավելացում մթնոլորտում, ինչպես նաև ձեռնարկություններում օգտագործված վառելիքի (բնական գազ) արյումից առաջացած գազեր (ածխածնի և ազոտի օքսիդներ): Մետաղների վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների գործունեության ընթացքում արձանագրվել են ծծմբի երկօքսիդի արտանետումների գերազանցումներ՝

պայմանավորված հեռացող գազերի (մասնավորապես ծծմբի) որսման համակարգերի ոչ լիարժեք աշխատանքով: Ստորգետնյա եղանակով ընդերքօգտագործման դեպքում առաջացած ֆիլտրացիոն ջրերը (քիմիական տարբեր նյութերով հագեցած) արտահոսում են բաց մակերևույթ, ինչպես նաև կարող են թափվել մակերևույթային ջրային ռեսուրս և պատճառ դառնալ տարբեր բնապահպանական խնդիրների և հետևանքների առաջացման: Վերջինիս կանխարգելման համար անհրաժեշտ իրավական և ընթացակարգային կարգավորումները ներկայումս բացակայում են:

ՀՀ որոշ տարածքներում՝ մասնավորապես մայրաքաղաքում լայնամասշտաբ շինարարական աշխատանքների իրականացման հետ կապված արձանագրվել են անօրգանական փոշու արտանետումների գերազանցումներ: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված են շինարարության ընթացքում փոշու արտանետումների շինարարական հրապարակից դուրս տարածվելը կանխարգելելու պահանջ/պայմանները, անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություններով հստակեցնել աշխատանքների իրականացման ողջ ընթացակարգը: Օրինակ՝ «օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում **պարբերաբար** ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս» սահմանումը վերաձևակերպել հետևյալ կերպ՝ «շինարարական հրապարակներում, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, **24 ժամվա ընթացքում անընդմեջ խոնավեցնել տարածքը՝ ջրցող եղանակով, (քամու առկայության,** օդի դրական ջերմաստիճանի **դեպքում ավելացնելով խոնավեցման քանակը)**՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս»: Միջազգային փորձը վկայում է, որ վերջինս վաղուց կիրառվում է շատ զարգացած պետություններում և տվել է իր դրական ազդեցությունը անօրգանական փոշու արտանետումների չափաքանակի նվազեցման առնչությամբ:

Ավտոտրանսպորտային միջոցների քանակի ավելացմամբ, ինչպես նաև դրանց տեխնիկական ոչ լիարժեք հագեցվածությամբ պայմանավորված՝ ավելացել է

մթնոլորտում ածխաջրածինների, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի քանակությունը: Չնայած, որ ՀՀ-ում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների իրականացման կարգը սահմանված է, սակայն առկա է անհրաժեշտություն կատարել կարգավորումների փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև կիրառման հետ կապված ընթացակարգային լուծումներ:

Վերահսկողական գործառույթներ իրականացնելիս պարբերաբար արձանագրվում են մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործություն ունեցող կազմակերպություններին հաշվառելու խնդիրներ, այն է՝ տնտեսավարող սուբյեկտը մինչև գործունեություն ծավալելը պետք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառվի, որի կարգավորումները ներկայումս բացակայում են:

Վերահսկողության արդյունքներով պարզվել է, որ ՀՀ տարածքում գրեթե 60% համայնքների կողմից ջրային ռեսուրսներից իրականացվում է չկարգավորված ջրօգտագործում, այն է՝ առանց թույլտվության ջրառի իրականացում, ոչ մասնագիտական սպասարկում (տիղմանստեցման, մաքրման, քլորացման, հեռացվող կեղտաջրերի վնասազերծման և հաշվառման բացակայություն):

Ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսավարողների մոտ իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել է ջրօգտագործման թույլտվության պայմանների խախտման դեպքեր (ջրօգտագործման թույլտվության ծավալների գերազանցում, հեռացվող կեղտաջրերի մաքրման բացակայություն և ոչ սահմանված վայրերում արտահոսք):

Իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում արձանագրվել է թափոնների կառավարման ուղղության բազմաթիվ խախտումներ: Հաշվի առնելով, որ ՀՀ-ում չի գործում թափոնների կառավարման արդյունավետ համակարգ, թափոններով ծածկված տարածքները ընդլայնվում են՝ արդյունքում առկա է ոլորտային բարձր ռիսկ: Արձանագրվել են արտադրական և սպառման թափոնների սահմանված կարգով հաշվառման բացակայության, չթույլատրված տեղերում տեղադրման, սահմանված կարգին համապատասխան վտանգավոր թափոնների անձնագրերի,

վտանգավոր թափոնների վերամշակման վնասազերծման, պահման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիաների բացակայության դեպքեր: Համատարած բնույթ են կրում տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացվող աղբահանության ոչ պատշաճ գործընթացի խախտումները:

Իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել են նաև հողի բերրի շերտի ապօրինի օգտահանման, պահպանման և տեղափոխման մասով իրավախախտումներ:

1.3.2 Ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Սույն ուղղություններում արձանագրվող իրավախախտումների քանակի և դրանց հետևանքով առաջացող ռիսկերի նվազեցման նպատակով 2023 թվականի կտրվածքով ԲԸՏՄ-ի կողմից իրականացվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերահսկողական միջոցառումներ՝ տարեկան պլանավորված ստուգումներ, ինչպես նաև իրավապահ և այլ պետական մարմինների հետ համատեղ շարունակական կանխարգելիչ միջոցառումներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնապահպանության և ընդերքի ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարողների մոտ մթնոլորտային օդի, ջրի, հողի պահպանության հետ առնչվող իրավախախտումներ առկա են գրեթե 90%-ի մոտ, ուստի կատարված վերլուծություններով պլանավորվում է իրականացնել վերահսկողություն համայնքապետարաններում, ՓՀԷԿ-երում, ձկնաբուծարաններում, կոմունալ տնտեսություններում, շինարարական և արտադրական ընկերություններում, հյուրանոցներում, ՀՀ բնակավայրերում և մայրուղիներին՝ հողի բերրի շերտի ապօրինի օգտահանման, պահպանման և տեղափոխման առնչությամբ և այլ:

2023 թվականին նախատեսվում է Շրջակա միջավայրի նախարարություն և Գրասենյակ ներկայացնել առաջարկություններ՝

- ✓ ՀՀ կառավարության 1999 թվականի «Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն

որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ կապված մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների հաշվառման ենթակա կազմակերպություններին հաշվառելու ընթացակարգի հստակեցման մասով:

✓ ՀՀ կառավարության 2003 թվականի «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 1110-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ՝ մասնավորապես տնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսներից ջրառի իրականացման մասով:

✓ «Թափոնների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ մասնավորապես թափոնների պահման ժամկետների հստակեցման մասով:

✓ ՀՀ կառավարության 2005 թվականի «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 91-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ մասնավորապես ոչ համասեռ աղտոտման գոտու աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցների որոշման մասով:

✓ ՀՀ կառավարության 2005 թվականի «Հայաստանի Հանրապետությունում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասկար նյութերի արտանետումների չափումների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 2410-Ն որոշման մասով:

2. 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Ստուգումների տարեկան ծրագիրը կազմվել է ԲԸՏՄ-ի կողմից ճշտված թվով 3435 տնտեսավարող սուբյեկտների ցանկից՝ համաձայն ՀՀ կառավարության 2019թ. օգոստոսի 22-ի թիվ 1125-Ն որոշմամբ հաստատված ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության: ԲԸՏՄ-ի բազայում հաշվառված է թվով 4379 տնտեսավարող սուբյեկտ, որոնք համարվում են բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողներ:

ԲԸՏՄ-ի կողմից պլանավորված 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրում թվով 155 տնտեսավարող սուբյեկտներից 109-ն ունեն բարձր ռիսկայնություն, միջին ռիսկայնությամբ՝ 39 և ցածր ռիսկայնությամբ՝ 7, որոնք համաչափ բաժանված են ըստ ՀՀ վարչատարածքային մարզերի և ըստ տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա թողած առավել ռիսկային չափանիշների հավանական բացասական ազդեցության:

h/h	Տարածքային ստորաբաժանման անվանումը	Ստուգման ենթակա տնտեսավարողների քանակը	Ռիսկայնության աստիճանը		
			բարձր	միջին	ցածր
1	Երևանի ՏԲ	21	19	1	1
2	Արագածոտնի ՏԲ	10	6	4	-
3	Արարատի ՏԲ	16	16	-	-
4	Արմավիրի ՏԲ	16	15	1	-
5	Գեղարքունիքի ՏԲ	16	7	6	3
6	Լոռու ՏԲ	15	6	9	-
7	Կոտայքի ՏԲ	16	14	2	-
8	Շիրակի ՏԲ	10	7	3	-
9	Սյունիքի ՏԲ	10	5	5	-
10	Վայոց ձորի ՏԲ	12	8	3	1
11	Տավուշի ՏԲ	13	6	5	2
	ԸՆԴԱՄԵՆԸ	**155**	**109**	**39**	**7**

Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների թվաքանակն՝ ըստ եռամսյակների հետևյալն է.

1-ին եռամսյակ- 38 ստուգում

2-րդ եռամսյակ- 43 ստուգում

3-րդ եռամսյակ- 42 ստուգում

4-րդ եռամսյակ- 32 ստուգում

Թվով 155 տնտեսավարող սուբյեկտները ըստ տնտեսական գործունեության դասակարգման ունեն հետևյալ պատկերը՝

- ընդերքօգտագործում - 26
- էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում - 6
- էլեկտրաէներգիայի արտադրություն ջերմաէլեկտրակայաններում - 1
- անտառային տնտեսություններ - 2
- հատուկ պահպանվող տարածքներ - 1
- ձկնաբուծություն - 16
- արտադրություն - 44
- ջրօգատագործում - 14
- թափոնների տեղադրում և ոչնչացում-24
- շինարարություն - 12
- հյուրանոցներ - 2
- ռեստորաններ - 6
- ջերմոց - 1

ԲԸՏՄ-ի կողմից նախատեսված 2023 թվականի ընթացքում իրականացվելիք միջոցառումները՝ ըստ կատարման ժամանակացույցի ներկայացված է Հավելված 1-ում:

ԲԸՏՄ-ի կողմից նախատեսված 2023 թվականի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումները՝ ըստ կատարման ժամանակացույցի ներկայացված է Հավելված 2-ում:

Հավելված 1

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

հ/հ	**Միջոցառման անվանումը**	**Ակնկալվող արդյունքը**	**Կատարողը**	**Համակատարողը**	**Ժամկետը**
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	Մթնոլորտային օդի պահպանության, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության, հողերի օգտագործման և պահպանության, ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության, կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության վտանգավոր նյութերի, արտադրության ու սպառման թափոնների գործածության, սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացման ոլորտային ուղղություններում ՀՀ օրենսդրության պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացում	թվով 38 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	Տարածքային ստորաբաժանումներ և ոլորտային վերահսկողություն իրականացնող վարչություններ	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության, Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություններ	I եռամսյակ
		թվով 43 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			II եռամսյակ
		թվով 42 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			III եռամսյակ
		թվով 32 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			IV եռամսյակ

2	ԲԸՏՄ-ի վերահսկողության էլեկտրոնային համակարգի ստեղծման համար անհրաժեշտ տեխնիկական առաջադրանքի մշակում, վերահսկողության համակարգի ստեղծում՝ համապատասխան էլեկտրոնային ծրագրի և սարքավորումների ապահովմամբ:	Վերահսկողության արդյունավետության, հաշվետվողականության, թափանցիկության բարձրացում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Հիմնական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	2023 թվականի II կիսամյակ
3	Սևանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացվող համատեղ միջոցառումներ	Սիգ տեսակի ձկան վերարտադրության ապահովում և կենդանական աշխարհի օբյեկտների ապօրինի օգտագործման կանխարգելում	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն և տարածքային ստորաբաժանումներ		2023 թվականի I և IV եռամսյակներ
4	Կենդանիների վերարտադրության և որսի թույլտվության ժամանակահատվածում ապօրինի որսորդության դեմ անցկացվող միջոցառումներ (ստուգայցեր, շրջայցեր)	Կենդանական աշխարհի օբյեկտների ապօրինի օգտագործման կանխարգելում	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն ր	Տարածքային ստորաբաժանումներ	2023 թվականի I և II կիսամյակներ
5	Հողի բերրի շերտի ապօրինի օգտահանման, պահպանման և տեղափոխման միջոցառումները	Հողի բերրի շերտի ապօրինի օգտագործման կանխարգելում	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի, Կենսաբազմազանության վերահսկողության վարչություններ	Տարածքային ստորաբաժանումներ	2023 թվականի I և II կիսամյակներ

6	Ապօրինի ծառահատման և ձեռքբերված փայտանյութի տեղափոխման միջոցառումները	Տեղափոխվող փայտանյութի ապօրինի օգտագործման կանխարգելում	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն	Տարածքային ստորաբաժանումներ	2023 թվականի I և II կիսամյակներ
7	Անթափանց ծածկի սորուն նյութերի տեղափոխման միջոցառում	Բեռնատար ավտոմեքենաների անթափանց ծածկոցների բացակայության հայտնաբերում և տեղափոխվող սորուն նյութերի շրջակա միջավար թափվելու կանխարգելում	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի, Կենսաբազմազանության վերահսկողության վարչություններ	Տարածքային ստորաբաժանումներ	2023 թվականի I և II կիսամյակներ
8	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ԲԸՏՄ-ի անձնակազմի մարկշեյդերական գործի ուսուցում:	Վերահսկողության արդյունավետության բարձրացում	Ընդերքի վերահսկողության վարչություն	Տարածքային ստորաբաժանումներ	2023 թվական I եռամսյակ
9	Անօդաչու թռչող սարքերի կիրառման համար անհրաժեշտ ծրագրերի և վերլուծական գործիքների ուսուցում:	Վերահսկողության արդյունավետության բարձրացում	Ընդերքի վերահսկողության	Հիմնական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ	2023 թվական II եռամսյակ
10	ՀՀ կառավարության 2019 թվականի N1423-Ն որոշման մեջ փոփոխությունների և լրացումների առաջարկի ներկայացում Գրասենյակ	Գործող օրենսդրական դաշտի համապատասխանության ապահովում:	Ընդերքի վերահսկողության, Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի, Կենսաբազմազանության	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	2023 թվական III եռամսյակ

			վերահսկողության վարչություններ		
11	ՀՀ կառավարության 1999 թվականի «Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշման մեջ փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ:	Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների հաշվառման ենթակա կազմակերպություններին հաշվառելու ընթացակարգի հստակեցում:	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	2023 թվական III եռամսյակ
12	ՀՀ կառավարության 2003 թվականի «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 1110-Ն որոշման մեջ փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ:	Տնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսներից ջրառի իրականացման համար վնասի հաշվարկման գործընթացի վերանայում	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	2023 թվական III եռամսյակ
13	«Թափոնների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ:	Թափոնների պահման ժամկետների հստակեցում	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	2023 թվական III եռամսյակ

14	ՀՀ կառավարության 2005 թվականի «Հայաստանի Հանրապետությունում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 2410-Ն որոշման մեջ փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ:	ՀՀ-ում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից արտանետվող վնասակար նյութերի չափման ընթացակարգի վերանայում:	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	2023 թվական III եռամսյակ
15	ՀՀ կառավարության 2005 թվականի «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 91-ն որոշման մեջ փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ:	Ոչ համասեռ աղտոտման գոտու աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցների որոշում:	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	2023 թվական III եռամսյակ

Հավելված 2

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

h/h	**Միջոցառման անվանումը**	**Նպատակը և ակնկալվող արդյունքը**	**Կատարողը**	**Համակատարողը**	**Ժամկետը**
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1.	Բնապահպանության և ընդերքի ոլորտներում իրազեկման աշխատանքների իրականացումն ըստ ուղղությունների՝ ✓ Մթնոլորտային օդի պահպանություն, ջրային ռեսուրսների, հողերի օգտագործում և պահպանություն, ✓ Ընդերքօգտագործում և ընդերքի պահպանություն, ✓ Կենդանական և բուսական աշխարհի	Տեսչական մարմնի վերահսկողական ուղղությունների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում: Հնարավոր խախտումների կանխարգելում, թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովում: Ըստ ոլորտների՝ ✓ Թվով 6 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 4 աշխատանք): ✓ Թվով 2 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին:	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն: Ոլորտային և տարածքային ստորաբաժանումներ:	Յուրաքանչյուր եռամսյակի վերջին 3-րդ տասնօրյակ

	օգտագործում և պահպանություն, ✓ Վտանգավոր նյութեր, արտադրության և սպառման թափոններ:	եռամսյակ 1 աշխատանք): ✓ Թվով 4 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 2 աշխատանք): ✓ Թվով 3 իրազեկման աշխատանք (յուրաքանչյուր եռամսյակ 2 աշխատանք):			
2.	ԲԸՏՄ ղեկավարի և այլ պաշտոնատար անձանց հետ թվով 4 մամուլի ասուլիսների և/կամ հարցազրույցների կազմակերպում և անցկացում:	ԲԸՏՄ գործունեության վերաբերյալ հասարակության տեղեկացվածության բարձրացում, թափանցիկության ապահովում: ՁԼՄ-ների, հեռուստաընկերությունների հետ համագործակցություն: Յուրաքանչյուր եռամսյակ 2 միջոցառում:	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին		I եռամսյակ՝ մարտի 3-րդ տասնօրյակ II եռամսյակ՝ սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ
3.	Իրազեկում-հանդիպումներ Երևանում և ՀՀ մարզերում՝ տնտեսվարողների,	Տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկության մակարդակի բարձրացում,	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն: Ոլորտային և տարածքային ստորաբաժանումներ:	Երևան – I եռամսյակ՝ մարտի 2-րդ տասնօրյակ:

	հասարակական կազմակերպությունների, որսորդական միավորումների, բնապահպանների և արշավականների հետ բնապահպանության և ընդերքի ոլորտներում օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ:	իրենց իրավունքների և պարտականությունների մասին իրազեկման ապահովում, հնարավոր խախտումների կանխարգելում: Երևան - 1, Արարատ – 1, Արմավիր – 1, Արագածոտն – 1, Շիրակ – 1, Կոտայք – 1, Գեղարքունիք – 1, Տավուշ – 1, Լոռի – 1, Վայոց ձոր - 1 Սյունիք - 1			Արմավիր- II եռամսյակ՝ մայիսի 1-ին տասնօրյակ: Արագածոտն, Շիրակ – II եռամսյակ՝ հունիսի 3-րդ տասնօրյակ: Արարատ,Վայոց ձոր, Սյունիք - III եռամսյակ՝ սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ: Կոտայք, Գեղարքունիք Տավուշ, Լոռի - IV եռամսյակ՝ հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ:
4.	Խորհրդատվական և/կամ իրազեկող նյութերի,մամուլի հաղորդագրությունների պատրաստում, տարածում և/կամ հրապարակում:	Վերահսկողական ոլորտների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում: Հնարավոր խախտումների կանխարգելում,	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն: Ոլորտային և տարածքային ստորաբաժանումներ:	Յուրաքանչյուր եռամսյակ 10 հաղորդագրություն և/կամ հրապարակում

		թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովում: Ընդհանուր 40 մամուլի հաղորդագրություն և/կամ տեսանյութ:			
5.	Վարչական վարույթների, դիմում-բողոքների, ահազանգերի, հարցումների վիճակագրության վարում, ամփոփում, հրապարակում:	Իրավիճակի համեմատական վերլուծության արդյունքում՝ առկա խնդիրների բացահայտում: Թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովում:	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն: Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն:	Յուրաքանչյուր կիսամյակի ամփոփումից հետո 1 ամսյա ժամկետում: